ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 306-Ա

17 հունիսի 2024 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍՊԱՐՏԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՎԱՐԴԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Սպարտակ Մխիթարյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լեռնահովիտ գյուղի Վարուժան Բարեղամյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սպարտակ Մխիթարյանի ժամանակավոր անաշխատունակության պատճառով 2024 թվականի հունիսի 17-ից «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լեռնահովիտ գյուղի Վարուժան Բարեղամյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների և պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լեռնահովիտ գյուղի Վարուժան Բարեղամյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Վարդան Աբրահամյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

17.06.2024

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ